ԷԼԻԶԱ. ԲՐԱՆԿՈ

ԵՐՋԱՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Սովետական Հայաստան կատարած այցելությունը, ազատությունը և խաղաղությունը սիրող այդ ժողովրդի հետ անցկացրած ժամանակը, նրա գործունեությունը և երկրի շինարարությանն ուղղված ջանքերը, նրա բարեսրտությունը, եղբայրական զգացմունքները Բրազիլիայի խաղաղության կողմնակիցների նկատմամբ՝ կլինեն այնպիսի հիշողություններ, որոնք երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից։

Սովետական Միության հետ իմ առաջին իսկ շփումից ես սկսեցի է՛լ ավելի հիանալ այդ մեծ երկրով՝ աշխարհի բոլոր ազատ մարդկանց հույսով, աշխատավորների երկրով, որտեղ պրոլետարիատը առաջին անգամ իշխանությունը վերցրեց իր ձեռքը և այն ժամանակվանից իր կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ և մեծ Ստալինի իմաստուն առաջնորդությամբ ընթանում է արդարացի գործի համար, այն ամենի համար մղվող պայքարի ավանգարդում, որ նշանակում է ազատություն ժողովուրդների համար, մարդկության երջանիկ ապագա։

Ժամանելով Հայաստան, նրա աշխատասեր ու երջանիկ ժողովրդի մեջ ես գտա նույնպիսի վճռականություն՝ անդուլ կերպով պայքարելու հանուն խաղաղության փրկության, որին սպառնում են պատերազմի հրձիգները, որոնք ձգտում են հանուն իրենց էգոիստական շահերի անփառունակ պատերազմի մեջ նետել ժողովուրդներին։

Դարեր շարունակ մասնատված և ստրկացված Հայաստանին փրկեց Սովետական իշխանությունը, զավթիչների կողմից ավերված, համաճարակներով լի, սոված և անգրագետ ժողովուրդ ունեցող երկիրը նա վերածեց մեքենայացված սոցիալիստական դյուղատնտեսությամբ, բոլորի համար մատչելի գիտությամբ և արվեստով, աղամարդկանց, կանանց ու երեխաների համար ապահովված իրավունքներով ժամանակակից ինդուստրիալ Հայաստանի։

Ես այցելեցի Հայաստանի թատրոններն ու կառուցումները, նրա գործարանները, թանգարանները և դպրոցները, նրա եկեղեցիները և վանքերը, նրա արխիվները, որտեղ պահվում են հազարամյա վաղեմիություն ունեցող փաստաթղթեր։ Ես լսեցի Հայաստանի երաժշտությունը և նրա ժողովրդին տեսա պարելիս։ Ես տեսա ինչպես երջանիկ է ապրում հայ ժողովուրդը։ Տեսա, թե ինչպես է նա աշխատում հանուն իր երկրի պրոգրեսի, հարդելով իր նախնիներից ժառանգած տրադիցիաները։

Վերադառնալով Բրազիլիա, ես կպատմեմ այն ամենի մասին, ինչ տեսա և զգացի Հայաստանում և այլ վայրերում, որ ես այցելեցի Սովետական Միությունում։ Կպատմեմ խաղաղության նկատմամբ նրա սիրո և այն պահպանելու համար նրա պայքարի մասին։ Կպատմեմ այն ժողովուրդների հսկայական նվաճումների մասին, որոնք իրենց երկրի բախտը վերցրել են իրենց ձեռքը։ Ես անդուլ կերպով կպայքարեմ խաղաղության համար, որպեսզի Բրազիլիայի զինվորները երբեք, երբեք չբարձրացնեն իրենց զենքը սոցիալիզմի Հայրենիքի դեմ։